Ի՞նչ անել, ինչպե՞ս անել.
արդյունաբերական տնտեսություն



Արման Բարսեղյան
06.11|19:00
AGBU

Գերակա նպատակները

1. Բնակչության ներգրավվածության շարունակական աճ
2. Աղքատության կրճատում և վերացում
3. Առկա բնակչության թվաքանակի աճ
4. Հանրային ֆինանսների վերափոխում
5. *Արտաքին առևտրի կառուցվածքի վերափոխում*
6. Արտաքին պետական պարտքի կրճատում
7. Միջազգային պահուստների աճ

5 արդյունաբերական հեղափոխությունները



1784

1

Ձեռքի աշխատանքից անցում մեքենայացված արտադրության

Mechanisation



1870

2

Էլեկտրաէներգիայի կիրառմամբ մասսայական արտադրություն, առաջին հոսքագծերի հիմնում

Electrification

1969

3

Գիտատեխնիկական առաջընթացի հիման վրա համակարգչային տեխնոլոգիաների կիրառում

Automation



Այսօր

4

Ֆիզիկական, թվային և կենսաբանական ոլորտների միաձուլում, արհեստական բանականություն

Digitalisation

Վաղը

5

Պատասխանատու և ստեղծարար մարդը՝ նորարարության կենտրոնում, մարդակենտրոնություն

Personalisation

4-րդ և 5-րդ արդյունաբերական հեղափոխությունները



Չորրորդ արդյունաբերական հեղափոխություն

- Big Data
- Artificial Intelligence (AI)
- Machine Learning (ML)
- Internet of Things (IoT)
- Robotics
- Blockchain
- Cryptocurrency
- Virtual Reality



Հինգերորդ արդյունաբերական հեղափոխություն

- Sustainability
- Bio-economy
- Industrial Ecology
- Renewable Energy
- Clean Technology
- Green Nanotechnology

Իրականության վերափոխման գերակա միտումները

Գիտելիքի և տեղեկատվության արագ կուտակում
Ինքնաշխատ համակարգեր և արհեստական բանականության կիրառում (Automated System Operations and AI)

Անորոշության աճ
Որոշումների կայացման ունակություն և ապագայի կերտման հմտություններ (Future Shaping)

Բազմագործոն, բարդ և անընդհատ փոփոխվող իրականություն
Ստեղծարար մտածողություն (Design Thinking)

Ինչպե՞ս հաջողել

Առանցքում՝ մարդկային կապիտալը

Չնայած լայնածավալ ավտոմատացմանը՝ վճռական գործոնը ստեղծարար մտածողությամբ մարդն է, ով գեներացնում է գաղափարներ և իրագործում դրանք

Գիտելիքի և հմտությունների ձեռքբերումից անցում խնդիրների լուծման

Գիտելիք և հմտություններ ձեռք բերելուն զուգահեռ՝ առավել վճռական է դառնում խնդիրների բացահայտման և լուծման կարողությունների զարգացումը

Մրցակցության փոխարեն համագործակցություն

Խնդիրների լուծման գործընթացում համագործակցությունն է դառնում մարդկանց միջև գերակա փոխհարաբերությունը:

Ստեղծարար մտածելակերպ
Design Thinking

Empathize

Ուսումնասիրել խնդիրը

Define

Սահմանել խնդիրը

Ideate

Գեներացնել գաղափարներ

Prototype

Ստեղծել նախատիպեր

Test

Փորձարկել լուծումը

Ստեղծարար մտածելակերպի մոդելը



<<Կապիտալիզմից վերադարձ հումանիզմ>>

Վճռական ռեսուրս	Կապիտալ/ տեխնոլոգիա	Ստեղծարար մարդ, մարդ-աստված
Մոդել	Կենտրոնացված, հիերարխիկ	Ապակենտրոն, հորիզոնական
Նպատակը	Արդյունավետություն և շահույթի գեներացում	Խնդրի լուծում և նոր արժեքի ստեղծում, նորարարություն
Գերակա փոխհարաբերություն	Մրցակցություն	Համագործակցություն

Արդյունաբերական քաղաքականություն կամ ռազմավարություն

Արդյունաբերական ռազմավարությունը պետության պաշտոնական քաղաքականությունն է ընդհանուր տնտեսության կամ վերջինիս՝ ընտրված ոլորտների աճը և զարգացումը խթանելու ուղղությամբ, որն առավել հաճախ կենտրոնանում է արդյունաբերության/արտադրության ոլորտի կամ վերջինիս ընտրված ենթաոլորտների վրա

Կայուն զարգացման և առաջընթացի հիմնական գործոնն ու չափանիշը հանրության և անհատի ազատության մակարդակի բարձրացումն է:

Արդյունաբերական տնտեսությունը՝ պլանային և շուկայական տնտեսության միջև

Մրցակցային առավելություններ՝ ռեսուրսներ, մասշտաբ և այլն

Արդյունաբերական քաղաքականության հիմնական հակասությունը

Ընդհանուր տնտեսության զարգացմանն ուղղված քաղաքականությունն այնքան լայն է, որ ըստ էության համընկնում է տնտեսական քաղաքականության հետ և որևէ պրակտիկ/կոնկրետ նշանակություն չունի:

Տնտեսության ընտրված ոլորտների աճի և զարգացման խթանումը հակասում է ազատության արժեքին:

Հակասությունն ավելի է սրվում, երբ արդյունաբերական քաղաքականության ոլորտը նեղացվում և սահմանափակվում արդյունաբերությամբ կամ դրա ենթաոլորտներով:

Արդյունաբերական քաղաքականության հիմնական հակասությունը

Ներքին տնտեսության մեջ արդյունաբերական քաղաքականության համար ինչքան ավելի նեղ թիրախ է ընտրվում, այնքան ավելի է մեծանում խտրականության աստիճանը՝ սահմանափակելով այլոց ազատությունը, ընդ որում՝ հենց վերջիններիս վճարած հարկերի հաշվին (օրինական հովանավորչություն/կոռուպցիա):

Արդյունաբերական քաղաքականության թիրախային ոլորտը ընդլայնելու պարագայում խտրականությունը նվազում է, սակայն կորչում է կենտրոնացումն ու արդյունավետությունը:

Ո՞րն է այս հակասության հանգուցալուծումը:

Հակասության հանգուցալուծումը

Հակասությունը հանգուցալուծվում է այն պարագայում, երբ արդյունաբերական քաղաքականությունը դիտարկվում է ոչ թե ներքին տնտեսության համատեքստում, այլ՝ արտաքին տնտեսության հետ հարաբերությունների համատեքստում:

Արդյունաբերական քաղաքականության թիրախը պետք է լինի ներքին տնտեսության մրցունակության բարձրացումը և արտաքին շուկաներում հայրենական ընկերություններին աջակցությունը:



Արդյունքում՝ արդյունաբերական քաղականությունը կամ ռազմավարությունը տրանսֆորմացվում է մրցունակության բարձրացման քաղաքականության կամ ռազմավարության (Competitiveness Policy or Strategy):

Դեպի նորարական տնտեսություն



Մրցունակ և նորարարական ոլորտների արդյունավետ համադրություն

Ռազմավարական հեռանկարում **նոր արժեք** ստեղծող գերազանցապես նորարարական տնտեսությունը՝ որպես գերակա նպատակ

Բնապահպանական և կայուն զարգացման ասպեկտները

Եզրահանգումներ

Արդյունաբերական քաղաքականության փոխարեն՝ տնտեսության մրցունակության բարձրացման և նորարարությունների խթանման քաղաքականություն, որը կկենտրոնանա ոչ թե ներքին տնտեսության վրա, այլ՝ ներքին և արտաքին տնտեսությունների հարաբերությունների և դրանք բնութագրող ցուցանիշների վրա

ՀՆԱ-ի փոխարեն առավել ակտուալ են դառնում արտաքին առևտրի, ծառայությունների և կապիտալի շարժի, բնակչության միգրացիայի ցուցանիշները:

Ցուցանիշների արժեքային կամ ծավալային բնութագրիչների փոխարեն առավել արդիական է դառնում դրանց որակական ասպեկտը՝ ՀՆԱ-ից դեպի կյանքի որակ:



Դեպի որակ, ներառականություն, կայուն աճ

- ✓ Անձնական օգտագործման պատրաստի արտադրանքի արտահանման և ներմուծման տարբերություն
- ✓ Հումքի և նյութերի ներմուծման և արտահանման տարբերություն
- ✓ Արտադրական օգտագործման պատրաստի արտադրանքի արտահանման և ներմուծման տարբերություն
- ✓ Ծառայությունների շարժի կառուցվածքը
- ✓ Բնակչության միգրացիայի կառուցվածքը՝ ըստ տարիքի, որակավորման և այլն
- ✓ Կապիտալ շարժի մեջ վարկային, ուղղակի ներդրումների և պորտֆելային ներդրումների մասնաբաժինները:

Ամփոփում

Արդյունաբերական քաղաքականության և տնտեսության փոխարեն՝ մրցունակության բարձրացմանն ու նորարարական տնտեսության ձևավորմանն ուղղված ռազմավարություն

Competitiveness and Innovation Policy and Strategy

Այն, ինչ հնարավոր է ՄՏՔՈՒՄ, հնարավոր է նաև ԻՐԱԿԱՆՈՒՄ...

Շնորհակալություն